Social Security

Հնարավոր է Որ Դուք Կարողանաք Ստանալ Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI)

2012թ.

www.socialsecurity.gov

Հնարավոր է Որ Դուք Կարողանաք Ստանալ Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI)

Ինչ է Լրացուցիչ Ապահովության եկամուտը

Լրացուցիչ ապահովության եկամուտը (SSI) դաշնային ծրագիր է, որն ամսական վճարումներ է տրամադրում սահմանափակ եկամուտ և քիչ միջոցներ ունեցող անձանց: SSI-ը օգնում է տարեցներին, ինչպես նաև կույր կամ հաշմանդամ ցանկացած տարիքի անձանց, այդ թվում՝ նաև երեխաներին:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալու համար, դուք պետք է՝

- Լինեք 65 տարեկան կամ ավել,
- Լինեք լրիվ կամ մասամբ կույր, կամ
- Ունենաք բժշկական մի վիճակ, որը արգելք է լինում ձեր աշխատելու կարողության եւ ակնկալվում է, որ նվազագույնը մի տարի շարունակվի կամ էլ ձեր մահվան պատճառ լինի: Երեխաների համար օրենքները տարբեր են: Հավելյալ տեղեկությունների համար կարդացեք *Նպաստներ հաշմանդամություններով երեխաների համար* (հրապարակման համար 05-10026-AM):

Որքա՞ն կարող եք ստանալ:

Լրացուցիչ 2012թ. Ապահովության Եկամուտի հիմնական ամսավճարը նույնն է երկրի տարածքում: Այդ հետեւյալն է՝

— $698 մեկ անձի համար, կամ

— $1,048 զույգի համար:

Տարբեր մարդկանց տրամադրվող օգնության չափը նույնը չէ: դուք կարող եք ավելի շատ ստանալ, եթե ապրում եք այնպիսի մի նահանգում, որը դաշնային SSI վճարումներին գումար է ավելացնում: Դուք կարող եք ավելի քիչ ստանալ, եթե դուք կամ ձեր ընտանիքն այլ եկամուտ ունի: SSI վճարումների չափը կախված է նաև այն բանից, թե որտեղ և ում հետ եք դուք ապրում:

Ինչպես որակավորվում եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտի նպաստների

Ձեր եկամուտը

Ձեր եկամուտը ընդգրկում է ձեր վաստակած փողը, Սոցիալական Ապահովության նպաստները, կենսաթոշակները եւ որեւէ այլ օգնություն, որ ստանում եք ուրիշ մի անձից, օրինակ՝ ուտելիք, հագուստեղեն եւ ապաստարան:

Դուք կարող եք ունենալ այլ եկամուտ եւ տակաւին իրավասու լինել Լրացուցիչ Ապահովության Եկամուտի: Ձեր բնակավայրը սահմանափակում է այդ եկամուտը: Տարբեր նահանգներ ունեն տարբեր օրենքներ:

Ձեր դրամական միջոցները՝

Դուք կարող եք SSI ստանալու հնարավորություն ունենալ, եթե ձեր միջոցների (ձեզ պատկանող իրերի) արժեքը չի գերազանցում 2,000 դոլարը՝ մեկ անձի դեպքում, և 3,000 դոլարը՝ զույգի դեպքում: SSI ստանալու ձեր իրավասությունը որոշելիս՝ մենք հաշվի չենք առնում ձեր ողջ ունեցվածքը: Օրինակ՝ մենք հաշվի չենք առնում ձեր տունը, եթե դուք ապրում եք այդ տանը: Սովորաբար, մենք նաև հաշվի չենք առնում նաև ձեր ավտոմեքենան: Սակայն հաշվի մեջ են մտնում կանխիկ դրամը, բանկային հաշիվներին ունեցած գումարները, բաժնետոմսերն ու պարտատոմսերը:

Դուք պետք է Ամերիկայի Նահանգների մշտական բնակիչ լինեք

SSI ստանալու համար դուք պետք է բնակվեք Միացյալ Նահանգներում կամ Հյուսիսային Մարիանյան կղզիներում: Եթե դուք ԱՄՆ քաղաքացի չեք, բայց օրինապես բնակվում եք Միացյալ Նահանգներում, դուք դեռևս կարող եք SSI ստանալու հնարավորություն ունենալ: Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *Լրացուցիչ ապահովության եկամուտ (SSI)՝ ոչ քաղաքացիների համար* (Publication No. 05-11051) հրապարակումը:

(շրջել)

Այլ նպաստներ

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ Ստանալու համար դուք նույնպես պետք է դիմեք որեւէ ուրիշ կանխիկ նպաստների որ ձեզ հնարավոր է ստանալ: Եթե Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանաք, ընդհանրապես դուք նաեւ կարող եք պարենային կտրոններ եւ Մէտիքէյտ ստանալ: Մէտիքէյտը կօգնի վճարել բժշկի եւ հիվանդանոցի ծախսերը, եւ պարենային կտրոններով կարող եք ուտելիքի գնել:

Ինչպես կարող են դիմել Լրացուցիչ Ապահովության Եկամուտի

Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմում ներկայացնելու համար ժամադրությամբ այցելեցեք Սոցիալական Ապահովության տեղական գրասենյակը:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-11069-AM
You May Be Able To Get Supplemental Security Income (SSI) (Armenian)
January 2012